

կութեան թիւ ամեննին չի տալիս համարեա թէ, իբր քահանայ՝ չի մոռանում վասքերն ու եկեղեցիները ու սրբոց մասնանքները: Զընայելով այդպիսի սեղմ, համառօտ տեղեկութիւններին երկրի արդիմարերութեանց մասին, այնուամենայնիւ երկրի տնտեսական վիճակի մասին որոշ գաղափար է տալիս: Խօսելով առանձին էրզրումի մասին խառնում է և ժամանակակից դէպքերը և երկրի դրութիւնը, հալածանքները: Կարսեցուց իմանում ենք, որ իր ժամանակին որևէ կոսակալութիւն մի փաշայի էր տրուում կառավարելու անսահման իրաւունքներով, իբր սեփականութիւն: Ինքը կարսեցին «կը» և «կերուածք» բառերով ամենից լաւ է բնորդում փաշայի իրաւունքներն ու երկրի քաղաքական վիճակը, որ ներկայ դրութիւնից շատ էլ տարբեր չէ:

Գիրքը լուսաբանուած է ծանօթութիւններով, որ կցուած է վերջին: Կայ յատուկ անուանց ցանկ: Գրքի դինը չէ նշանակուած վրէն: Հրատարակութիւնը եղել է խնամքով և մաքուր:

Ա. Վ. Դ.

* *) Դը-Մովասսանի «Գեղեցկունու խորավաճութիւնը եւ հանգուեալի գաղտնիքը» թարգմ. ու. Երուանդ Տէր-Յովհաննիսեանցի. 1903 թ. Բազու. գինն է 10 կոպէկ:

Գիրքը Մովասսան՝ Գիւտուաւ Ֆլորերի աշակերտը՝ իրապաշտ (réaliste) դպրոցի ցայտուն դէմքերէն մէկն է: Ֆլորերի, Ալֆոնս Ռոդէի, Գոնկուո եղբայրներուն հետ Մովասսանը՝ իրապաշտ դպրոցի գլխաւոր ներկայացուցիչներէն մէկը եղաւ: Մովասսանը՝ իր գրչի տաղանդաւոր ընկերներէն այն բանով կը տարբերէ՞ որ իր ոճը՝ ոչ Ֆլորերի գեղեցութիւնը, ոչ Ռոդէի նուրբ հեգութիւնը, և ոչ Գոնկուո եղբայրներէն չարչըկուած՝ տպաւորական (impressionniste) նկարագիրն ունի: Մովասսանը ժուժեկալ, ուժեղ, գրեթէ դասական լեզուով մը իրապաշտ պատմուածքներ գրած է, ուր ապշեցուցիչ ճշտութեամբ մը կը նկարագրէ գեղջուկներու, մանաւանդ նորմանդիացի գեղջուկներու բարքերը, պղտիկ բուրժուաներու և գործակատարներու (employé) նիստ ու կացը, անոնց ապրելու, զգալու, խորհելու եղանակները: Մովասսանը բացի պատմուածքներէ ունի մէկ

* *) Guy de Maupassant պէտք է կարդալ Գիրքալ Գիրքը Մովասսան և ոչ թէ Գիրքը Փրանսերէնի մէջ ց տառի մօտ դրուող ս տառը չի հնչուիր:

քանի վէպեր, ինչպէս Սու Vie, Bel Ami, Notre Coeur, Piérre et Jean. բայց ինքը նշանաւոր է իբրև պատմող, պատմուածքներ գրող:

Մոպասսանի պատմուածքները՝ հայերէնի թարգմանուած են մասամբ: Պ. Երուանդ Տէր-Յովիաննիսեան մեջի կու տայ երկու նոր պատմութիւններու թարգմանութիւնը: Մոպասսան շատ ու շատ պատմուածքներ ունի գրած: Բոլորը թարգմանել, կարծենք, միտք չ'ունի: որովհետև եթէ Մոպասսանը ունի հիանալի պատմուածքներ, ունի և այնպիսիները, որոնք շատ քիչ հետաքրքրութիւն կարող են արթնցնել մեր մէջ: Վախճամ պ. Տէր-Արդէսաւեանի թարգմանածները այդ տեսակներէն ըլլան:

Ահա քանի մը բառով Գեղեցկունու խոստովանութիւնը: Բըլտանեցի կոմս մը՝ իր կնոջ մասին կասկածներ ունի: Կինը թէս իր ամուսինը չի սիրեր, բայց անոր հաւատարիմ է: Կոսուի կասկածները կը ծագին պահապանէն որը միշտ, գիշեր ժամանակ, մէկու մը գաղտագողի զնալ գալը կը նկատէ: Պահապանը՝ գիշերային այցելուն՝ կոմսի կնոջ սիրահարը կը կարծէ: Կոմսը կը վճռէ սարսափելի վէժ լուծել:

Անգամ մը, երբ ընթրիքը վերջացուցած էին, կոմսը իր կնոջ կը հարցնէ թէ չ'ուզէր արգեօք իրեն ընկերանաւ, «որպէս զի սպասնեն ամէն գիշեր իր հաւերը գողացող արուէսին»: Կինը վայրկեան մը տատանելէ յետոյ, կ'ընդունի ամուսին առաջարկը: Կը զիմեն որոշուած տեղը ու գարանի կը մտնեն: Կը սպասնեն, յանկարծ «ամուսինս բանելով ձեռքս, բոլորովին փոխուած ձայնով ասաց. «Տեսնում էք ծառերի ետև նրան»: Ես սկսեցի զիտել, բայց ոչինչ չը կարողացայ նշմարել: Երվէն անընդհատ աչքերիս մէջ նայելով սկսաւ դանդաղ բարձրացնել հրացանը: Ես ինքս ևս պատրաստում էի հրացանս պարպել, երբ նկատեցի երեսուն քայլաչափ հետաւորութեան վրայ լուսնու լուսով լուսաւորուած մի մարդու»:

Ահա այդ էր աղուէսը: Կինը անմիջապէս կը հասկանյ. կ'ուզէ աղմուկ բարձրացնել, բայց գնդակը կը մեկնի ու գետին կը գլտորէ անծանօթը:

Սպանուողը՝ փոխանակ տանտիրուհիին հաւերը գողնալու, աղախնին հաւերը կը գողնար ամէն գիշեր: Կոմսը սպասներ էր, խարուելով պահապանէն, իր աղախնին սիրահարը:

«Եւ հէնց այդ վայրկեանից ես հասկացայ, որ պիտի անհաւատարիմ գտնուեմ դէպի իմ ամուսինս» կը վերջացնէ զեղեցկունին իր խոստովանութիւնը:

Հանգուցեալի գաղտնիքը.—կը մեռնի մարը, ու զաւակները մամնին շուրջը հաւաքուած՝ կը սգան: 0՝, որքան

քարի էր իրենց մայրը ու որքան պարկեցած։ Լաց ու կոծերէ յետոյ քոյրը իր եղբօրը կ'ըսէ.

«Դուք գիտե՞ս, թէ ինչպէս մայրիկը սիրում էր կարդալ իր հին նամակները. նոքա բոլորը այստեղ պահարանումն են, և արդեօք լաւ չէր լինի որ մենք ևս այս գիշեր կարդանք վերջին անգամ նրա մօտ և մի անգամ ևս վերակենդանացնենք նորա ամբողջ անցեալը. դա կը լինէր մի միջոց, որ կը յիշէինք գոնէ վերջին անգամ նորա մօրը և մեր անձանօթ նախորդներին, որոնց նամակներն այստեղ են գտնում, և եթէ յիշում ես, որոնց մասին նա յաճախ խօսում էր»։

Ու արկդէս հինցած, դեղնած նամակի ծրաբները կը հանեն ու յաջորդաբար նամակները կը կարդան։ Կը վերցնեն ծըրար մը, որուն վրայ ոչինչ գրուած չէ. կը բանան ու կը գտնեն այսպէս խօսքեր. «իմ պաշտածու, ես քեզ սիրում եմ խելագարի նման... ես զգում եմ թէ ինչպէս շրթունքներդ դիպչում են իմ շրթունքներին, աչքերդ՝ աչքերիս, մարմինդ՝ մարմնոյս եայն»։

Եղբայրը՝ քրոջ ձեռքէն կը խլէ նամակը. կը նայի ստորագրութեան՝ «ՀՀՀՆՐԻԿ»։ Իրենց հօրն անունն էր սակայն Ռընէ. Ուրեմն այդ նամակը իրենց հօրմէն չէր. Քոյր ու եղբայր ապշութենէն կը քարանան եղբայրը քրոջը կ'ըսէ.

«Ա, ժմ քոյրիկս հեռանանք այստեղից»։

Թարգմանութիւնը՝ իր արատներով հանդերձ՝ տանելի է. մարդ այս լեզուն՝ աւելի դիւրութեամբ կը կարդայ քան գրաբարի և աշխարհաբարի խառնուրդ charabia-ն։

Թարգմանութիւնը կատարուած է սակայն, փոխանակ քնագրի վրացէն՝ ուուսերէնից։

ԶԱՀԵՆ

Պոլ Բուրժէի «ՄԻ ԽՈՍՏԸՎԱՆԲԱՐԻՒՅ» վեպիկ թարգմ. Փրանսերէնից ն.
Ցարոյ. 1903 թ. Թիֆլիս գինն է 15 կ.։

Պոլ Բուրժէ՝ Ֆրանսայի այն գրողներէն է, զորս կարելի է քնորոշել միակ քառով մը—«սալոնական»։ Պոլ Բուրժէ գրականութեան դիլետանտ, մը, սիրող մըն է։ Ստեղծագործութեան պէտքը՝ իր մէջ կիրք մը չէ, ինչպէս Միրքօֆ մը, Զոլայի մը, Բոլ Ատանի մը, Ֆրանսի մը մէջ։ Խսքը աշխատած է վերլուծել կարդ մը հոգեբանական կնճիւներ, որոնք անտարբեր պիտի թողէին բուն ժողովուրդը, ժողովրդական անկեղծ, խորունկ գըրքականութեան մը սիրահարները։